ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ

Հ Ա Յ Տ

(ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպությունների (հասարակական միավորումներ, հիմնադրամներ կամ օրենքով նախատեսված այլ ձևերով կազմակերպությունների (բացառությամբ կուսակցությունների) համար)

1. Կազմակերպության անվանումը
«Տիգրան Աբգարյան» մարտական պատրաստության ակումբ հայրենասիրական բարեգործական հասարակական կազմակերպություն
2. Կազմակերպության գործունեության հասցեն
Գրանցման հասցեն՝
3. Կազմակերպության հիմնադրման տարին, ամիսը և օրը
06.12.2018 թ.
4. Կազմակերպության այն հիմնական ներկայացուցչի անունը, ազգանունը, հաշվառման հասցեն, անձնագրային և կոնտակտային տվյալները (հեռախոսահամար/ներ, էլփոստ), որը մասնակցելու է խորհրդի նիստերին:
Ժորա Արամի Աբգարյան, ք. Գյումրի,
5. Հասարակական և սոցիալական այն խմբերը, որոնք կազմակերպության շահառուներ են:
ՀՀ չափահաս այն քաղաքացիները, որոնք կարող են սովորել առաջին բուժօգնություն և կատարել կամավորական աշխատանք:
6. Մինչ օրս կազմակերպության իրականացրած հիմնական խոշոր ծրագրերը (նշել 3-5-ը)՝ ըստ իրականացման հաջորդականության:
Կազմակերպությունը հիմնադրվել է «**Մարտական խաչ» առաջին աստիճանի ասպետ, տանկիստ, գյումրեցի Տիգրան Աբգարյանի հիշատակին:** 2016 թվականից մինչ այսօր կամավորների միջոցով կազմակերպում ենք անվադողերի հավաքում՝ ՀՀ ՊՆ զորամասերի ինժեներական ամրությունների համար: Համագործակցել ենք Շիրակի մարզպետարանի, Գյումրու քաղաքապետարանի, Հայորդաց տների հետ: 2021 թվականից իրականացնում ենք կրթական ծրագրեր ՀՀ տարբեր մարզերում, բնակիչներին պատրաստում արտակարգ իրավիճակներում պատրաստ լինելուն, իրականացնելով՝ առաջին օգնություն ցուցաբերելու պարապմունքներ, արշավներ, բանակումներ, հանդիպումներ, սեմինարներ՝ անվտանգության վերաբերյալ, տարբեր դպրոցներում, համալսարաններում, այլ ՀԿ-ների, հիմնադրամների, կազմակերպությունների հետ համատեղ իրականացնում դասընթացներ երիտասարդների համար: 2021-2025թթ. Գյումրիում կազմակերպել ենք մի քանի բանակում, տասնյակ արշավներ, հանդիպումներ և դասընթացներ, իրականացրել ռմբապաստարանների մաքրման աշխատանքներ: 2024թ. US AID ի հետ իրականացրել ենք առաջին օգնության դասընթացներ Գյումրու

	դպրոցներում: 2025թ. AANSI Հայ Ամերիկյան ազգային անվտանգության ինստիտուտի հետ Գորիսում իրականացրել ենք առաջին օգնության դասընթաց ԱԻՆ-ի, բշկական կենտրոնի բուժանձնակազմի, շտապ օգնության անձնակազմի, Գորիսի պետական համալսարանի ուսանողների հետ:
7.	Կազմակերպության համագործակցությունը տեղական և միջազգային, պետական և հասարակական կառույցների հետ
	Համագործակցում ենք՝ ՀՀ ՊՆ, ՆԳՆ, US AID-NDI, ԱՄՆ-ի միջազգային AANSI Հայ Ամերիկյան ազգային անվտանգության ինստիտուտի, Շիրակի մարզպետարանի, Գյումրու համայնքապետարանի, <<Կատարինե համայնք կամրջողներ>> ՀԿ-ի, բարեգործական կազմակերպությունների, հիմնադրամների, բարձրագույն և հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ:
8.	Գործունեության ընթացքում կազմակերպության ներկայացուցչի ստացած մրցանակները, պարգևները (մեդալներ, հուշամեդալներ, կրծքանշաններ և այլն, կցել վկայականների կրկնօրինակները):
	ՀՀ ՊՆ «Վազգեն Սարգսյան» գերատեսչական մեդալ, «Հայրենիքի պաշտպանության համար», «Մեծն Տիգրան» ասպետաց շքանշան, պատվոգրեր, 2020թ. կազմակերպությունը ճանաչվել է տարվա լավագույն կամավորական նախաձեռնության հաղթող:
9.	Կցվում են հետևյալ փաստաթղթերը՝
	1) ՊՆ «Վազգեն Սարգսյան» մեդալ
	2) «Մեծն Տիգրան» ասպետաց հուշամեդալ
	3) ՊՆ զորամասերի հրամանատարների կողմից տրված պատվոգրեր
	4) AANSI, և USAID-NDI ի կողմի տրված մասնակցության հավաստագրեր
	5) կազմակերպության գրանցման պետռեգիստրի վկայականի պատճենը
	6) կազմակերպության կանոնադրությունը
	7) կազմակերպության նախագահի անձնագրի պատճենը:

«25» նոյեմբերի 2025թ.